

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագծի (Նախագիծ) վերաբերյալ

Սույն թվականի հունվարի 8-ին ՀՀ Արդարադատության նախարարությունը հանրային քննարկման է դրել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Դատական դեպարտամենտի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը¹:

Սույն կարծիքով մենք՝ Ներքոստորագրյալ կազմակերպություններս, արձանագրելով նախագծերով սահմանված մի շարք առաջընթաց կարգավորումները, որոնք ուղղված են դատական իշխանության հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը, հեղինակների ուշադրությունն ենք հրավիրում որոշ էական խնդիրների վրա, որոնք ենթակա են հասցեագրման Նախագծերի լրամշակման շրջանակում (Ներկայացված առաջարկների մի մասը վերաբերում է գործող Դատական օրենսգրքով սահմանված կարգավորումների թերություններին, որոնց հասցեագրումը այս փուլում էական կլինի կարգապահական վարույթների արդյունավետության խնդիրները լիարժեք հասցեագրելու տեսանկյունից): Արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են հետևյալ հարցերին՝

Ա. Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրության կարգ

Բ. Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման համար ձայների նվազագույն քանակ

Գ. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակեցման անհրաժեշտություն

Դ. Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների սահմանափակ հրապարակման կարգավորումներ

Ե. Հանձնաժողովի ոչ դատավոր անդամների վարքագծի կանոններին առնչվող կարգավորումներ

Զ. Նոր հանգամանքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների վերանայմանն առնչվող կարգավորումների թերություններ

¹ <https://www.e-draft.am/projects/8183/about>

Ա. Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրության կարգ

Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) ոչ դատավոր անդամների առաջնային ընտրությունը, ինչպես գործող Դատական օրենսգրքով, այնպես էլ Նախագծով վերապահված է դատավորների ընդհանուր ժողովին:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրությունը դատավորների ընդհանուր ժողովին վերապահելը խիստ խնդրահարույց է և չի բխում Հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության ապահովման և դատական կորպորատիվիզմի ռիսկերը նվազեցնելու՝ հռչակված նպատակներից: Նման մոտեցումը ուղղակիորեն հակասում է նաև դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության բնագավառում առկա միջազգային չափորոշիչներին և ԵԽ Վենետիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումներին:

Հարկ է արձանագրել նաև, որ Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի բարեփոխման հայեցակարգի վերաբերյալ կարծիքով Վենետիկի հանձնաժողովը² տարակուսանք է արտահայտել Հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրության կարգի վերաբերյալ, արձանագրելով, որ թեև Հայեցակարգի հիմնավորման մեջ նշվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից ոչ դատավոր անդամների ընտրությանն առնչվող խնդիրները, այնուամենայնիվ, չնայած այս քննադատական գնահատականին, Հայեցակարգը պահպանում է դատավորների ընդհանուր ժողովի առաջնային դերը Հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրության հարցում:

ԵԽ Վենետիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումները դատական խորհուրդների կազմի և ձևավորման կարգի վերաբերյալ

Դատական խորհուրդների կազմին առնչվող ԵԽ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները հանգում են դրանցում դատավոր և ոչ դատավոր անդամների հավասարակշռված ներկայացվածության անհրաժեշտությանը՝ դատական կորպորատիվիզմի կանխարգելման և հանրային վերահսկողության ապահովման նպատակներով:

Այսպես, Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքով արձանագրվել է. «9.1-րդ հոդվածը սահմանում է Կարգապահական խորհրդի կազմը (5 դատավոր անդամներ և 4 անդամներ՝ քաղաքացիական հասարակությունից): Նման կազմը ողջունելի է, քանի որ այն կնպաստի թափանցիկության, ինչպես նաև կարգապահական վարույթներին համայնքի ներգրավվածության ապահովմանը՝ միաժամանակ կանխելով դատական կորպորատիվիզմի ռիսկը»³:

² CDL-AD(2023)045, Joint Opinion of The Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of The Council of Europe on the Concept Paper Concerning the Reform of the Ethics and Disciplinary Commission of the General Assembly of Judges, available at [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2023\)045-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2023)045-e)

³ CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic

Ղրդգստանի «Դատավորների կարգավիճակի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքով ընդգծվել է, որ «բոլոր դեպքերում խորհուրդը պետք է ունենա պլյուրալիստական կազմ՝ դատավորների զգալի, եթե ոչ մեծամասնության ներգրավմամբ»⁴:

Ուկրաինայի Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքով հանձնաժողովը պնդել է, որ «դատական խորհրդի ոչ դատական բաղադրիչը վճռորոշ է խորհրդի կարգապահական բնույթի լիազորությունների արդյունավետ իրականացման համար»⁵:

«[...] Ընդունված պրակտիկա է, որ «դատական խորհուրդները ներառում են նաև դատական համակարգի մաս չհանդիսացող և իշխանության այլ ճյուղեր կամ ակադեմիական կամ մասնագիտական հատվածը ներկայացնող անդամներ», և Վենետիկի հանձնաժողովը նույնիսկ խորհուրդ է տալիս, որ անդամների զգալի մասը կազմեն ոչ դատավոր անդամները [...] CDL-PI(2023)020 -36»⁶:

«Կորպորատիվիզմից կարելի է խուսափել՝ ապահովելով, որ դատական ծառայության հանձնաժողովի անդամները, որոնք ընտրվում են իրենց գործընկերների կողմից, որպես մարմին, չունենան վճռորոշ ազդեցություն: Նրանք պետք է արդյունավետորեն հակակշռվեն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ (իրավաբաններ, իրավունքի դասախոսներ և բոլոր իշխանության ճյուղերից իրավական, ակադեմիական կամ գիտական ոլորտների խորհրդականներ)»⁷:

Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§46 and 48

⁴ CDL-AD(2011)019, Opinion on the introduction of changes to the constitutional law ‘on the status of judges’ of Kyrgyzstan, §24

⁵ CDL-AD(2013)034, Opinion on proposals amending the draft law on the amendments to the constitution to strengthen the independence of judges of Ukraine, §41 See also CDL-AD(2014)026, Opinion on the seven amendments to the Constitution of “the former Yugoslav Republic of Macedonia” concerning, in particular, the judicial Council, the competence of the Constitutional Court and special financial zones, §§74-76

⁶ CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, §§30,31

⁷ CDL-AD(2002)012, Opinion on the Draft Revision of the Romanian Constitution, §66 See also CDL-AD(2018)017, Opinion on draft amendments to Law No. 303/2004 on the Statute of Judges and Prosecutors, Law No. 304/2004 on Judicial Organisation, and Law No. 317/2004 on the Superior Council for Magistracy of Romania, §§138, 139; CDL-AD(2017)019, Opinion on the Draft Judicial Code of Armenia, §89; CDL-AD(2017)018, Opinion on the Judicial System Act of Bulgaria, §24; CDL-AD(2015)037, First Opinion on the Draft Amendments to the Constitution (Chapters 1 to 7 and 10) of the Republic of Armenia, §179; CDLAD(2015)022, Opinion on the draft Act to amend and supplement the Constitution (in the field of the Judiciary) of the Republic of Bulgaria, §45; CDL-AD(2012)020, Opinion on the Cardinal Acts on the Judiciary that were amended following the adoption of Opinion CDL-AD(2012)001 on Hungary, §§33, 34; CDL-AD(2012)001, Opinion on Act CLXII of 2011 on the Legal Status and Remuneration of Judges and Act CLXI of 2011 on the Organisation and Administration of Courts of Hungary, §45; CDL-AD(2005)003, Joint opinion on a proposal for a constitutional law on the changes and amendments to the Constitution of Georgia by the Venice Commission and OSCE/ODIHR, §102; CDL-AD(2002)021, Supplementary Opinion on the Revision of the Constitution of Romania, §§21, 22

«[...] Ցանկալի է, որ դատական խորհուրդները ընդգրկեն անդամներ, որոնք դատական իշխանության ներկայացուցիչներ չեն հանդիսանում: Սակայն նման անդամներին նախընտրելի է նշանակել օրենսդրի կողմից՝ գործադիրի փոխարեն»⁸:

Մոնտենեգրոյի օրենսդրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրվել է, որ հավասար թվով դատավորների և ոչ դատավոր անդամների կազմը կապահովի հասարակության ներառականությունը և կկանխի թե՛ մարմնի քաղաքականացումը և թե՛ ավտոկրատ կառավարումը⁹:

Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ Մոլդովայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքով նշվել է. «[...] [T]Կարգապահական խորհրդի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության մրցույթի կազմակերպումը ողջունելի է: Այնուամենայնիվ, ցանկալի կլիներ, որ թեկնածուների ընտրության չափանիշները, ինչպես նաև թեկնածուների ընտրության նպատակով ստեղծվող հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանված լինի օրենքով, և ոչ թե կանոնակարգով: Ավելին, պետք է հստակեցվի, որ նախարարի գործառույթը այդ անդամների նշանակման հարցում ֆորմալ բնույթի է, և որ նշանակումն իրականացվում է թեկնածուներ ընտրող հանձնաժողովի առաջարկություններին համապատասխան»¹⁰:

«[...] [Վենետիկի հանձնաժողովը երբեք կողմ չի եղել այնպիսի համակարգերի, որտեղ համապատասխան մարմնի բոլոր անդամներն ընտրվում են դատավորների կողմից: Հաշվի առնելով, որ այժմ CDF-ն [Փաստերի բացահայտման խորհուրդը]¹¹ ստացել է շատ կարևոր լիազորություններ դատավորների կարգապահական պատասխանատվության ոլորտում, խորհուրդ է տրվում, որ նրա անդամների զգալի մասը նշանակվի ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կողմից, առավել նախընտրելի է խորհրդարանի կողմից՝ ձայների որակյալ մեծամասնությամբ: [...]»¹²:

Մասնավորապես, «Փաստերի բացահայտման խորհրդի (CDF) մասին օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ խորհուրդը կազմված է 9 անդամից՝ չորս տարվա մանդատով՝ երեք պաշտոնաթող դատավոր (մեկը ոչ մեծամասնություն կազմող համայնքներից), երեք պաշտոնաթող դատախազ (մեկը ոչ մեծամասնություն կազմող համայնքներից),

⁸CDL-AD(2010)042, Interim Opinion on the Draft Law on the High Council for judges and Prosecutors (of 27 September 2010) of Turkey, §34

⁹ CDL-AD(2011)010, Opinion on the Draft Amendments to the Constitution of Montenegro, as well as on the Draft Amendments to the Law on Courts, the Law on the State Prosecutor's Office and the Law on the Judicial Council of Montenegro, §§20-22

¹⁰CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §54

¹¹ Փաստերի բացահայտման խորհուրդը ունի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն

¹² CDL-AD(2015)042, Opinion on the Laws on the Disciplinary Liability and Evaluation of Judges of "The Former Yugoslav Republic of Macedonia", §77

իրավաբանական ֆակուլտետների երկու թոշակի անցած դասախոսներ (մեկը ոչ մեծամասնության համայնքներից), և մեկ թոշակի անցած իրավաբան: Նախագահը և նախագահի տեղակալն ընտրվում են խորհրդի անդամներից: Բոլոր ինը անդամներն ընտրվում են դատավորների կողմից (հոդված 16): Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ Փաստերի բացահայտման խորհրդի (CDF) անդամների նշանակման կարգը չի ապահովում այս մարմնի ժողովրդավարական լեգիտիմությունը: Փաստերի բացահայտման խորհրդի (CDF)-ի մասին օրենքի 32-րդ հոդվածը նախատեսում է, որ խորհրդի բոլոր անդամները (ներառյալ ոչ դատավոր անդամները) ընտրվում են դատավորների կողմից՝ տպավորություն ստեղծելով, որ կարգապահական պատասխանատվությունը խնդիր է, որը պետք է որոշվի բազմապես դատավորների միավորման կողմից նշանակված անձանց կողմից: Սա բացառում է հատուկ կարևորություն ունեցող «ժողովրդավարական տարրը», որն, ի հակադրումս, առկա է Դատական խորհրդում, որտեղ առնվազն անդամների որոշ մասը ընտրվում է խորհրդարանի կողմից¹³:

Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է իր դիրքորոշումը, որն արտահայտվել է Բոսնիա և Հերցեգովինայի Բարձրագույն դատական և դատախազական խորհրդի (HJPC) մասին օրենքի նախագծի վերաբերյալ, որտեղ Հանձնաժողովն ընդգծել է, որ «կարևոր է հավասարակշռություն ապահովել խորհրդի (HJPC) անկախության պաշտպանության և նրա հանրային վերահսկողությունն ապահովելու և կորպորատիվիստական կառավարումը կանխելու շահերի միջև»: Թեև այդ կարծիքում առաջարկվել էր, որ խորհրդի անդամների մեծամասնությունը ընտրվի դատական իշխանության կողմից, **Վենետիկի հանձնաժողովը երբևէ կողմ չի եղել այնպիսի համակարգերի, որտեղ մարմնի բոլոր անդամներն ընտրվեն դատավորների կողմից**: Հաշվի առնելով, որ այժմ Փաստերի բացահայտման խորհուրդը (CDF) առանձնակի կարևորության լիազորություններ է ստանձնել դատավորների կարգապահական պատասխանատվության բնագավառում, խորհուրդ է տրվում, որ նրա անդամների զգալի մասը նշանակվի ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կողմից, առավել նախընտրելի է խորհրդարանի կողմից՝ ձայների որակյալ մեծամասնությամբ»¹⁴:

«[...] որպես ընդհանուր կանոն, խորհրդի կազմը նախատեսում է դատական իշխանության մաս չհանդիսացող անդամների ներգրավվածություն, որոնք ներկայացնում են այլ իշխանություններ կամ հասարակության ակադեմիական կամ մասնագիտական հատվածները: Այս ներգրավվածությունը արդարացված է, քանի որ խորհրդի նպատակները վերաբերում են ոչ միայն դատական համակարգի անդամների շահերին, այլ հատկապես ընդհանուր/հանրային շահերին: Արդարադատության որակի և անկողմնակալության նկատմամբ վերահսկողությունը կոնկրետ դատավորի շահերի շրջանակից դուրս գտնվող դերակատարում է: Խորհրդի կողմից

¹³ CDL-AD(2015)042, EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) OPINION ON THE LAWS ON THE DISCIPLINARY LIABILITY AND EVALUATION OF JUDGES OF “THE FORMER YUGOSLAV REPUBLIC OF MACEDONIA”, available at [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)042-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)042-e)

¹⁴ CDL-AD(2015)042, EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) OPINION ON THE LAWS ON THE DISCIPLINARY LIABILITY AND EVALUATION OF JUDGES OF “THE FORMER YUGOSLAV REPUBLIC OF MACEDONIA”, available at [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)042-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)042-e)

այս վերահսկողության իրականացումը կհանգեցնի արդարադատության իրականացման նկատմամբ բաղաբացիների վստահության բարձրացմանը»¹⁵:

Այսպիսով, ղեկավարվելով վերոգրյալ միջազգային չափանիշներով և հաշվի առնելով Հայաստանում ձևավորված իրողությունները, Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմի ընդլայնումը՝ ոչ դատավոր անդամների թվի ավելացման միջոցով, ինչպես նաև վերջիններից ընտրության կարգը գաղտնի քվեարկության ընթացակարգով փոխարինումը, համարում ենք առաջընթաց առկա իրավակարգավորումների համեմատությամբ: **Միևնույն ժամանակ Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրությունը դատավորների ընդհանուր ժողովին վերապահելու (թողնելու) խիստ խնդրահարույց է Հանձնաժողովի ձևավորման և հետևաբար կարգապահական վարույթների հարուցման հարցերը բազառապես դատավորների և նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների իրավասությանը վերապահելու համատեքստում, ինչն ուղղակիորեն հակասության մեջ է գտնվում ոլորտին առնչվող միջազգային չափորոշիչների հետ:**

Հարկ ենք համարում շեշտել նաև, որ Նախագծի հիմնավորման մեջ իրավացիորեն արձանագրվել է, որ Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների թվաքանակի ավելացումը չի կարող որակական փոփոխություններ մտցնել այս համակարգում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ոչ դատավոր անդամների ընտրությունը բազառապես դատավորների տիրույթում է՝ ի դեմս դատավորների ընդհանուր ժողովի: Մատնանշվել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում Դատավորների ընդհանուր ժողովը կարող է չընտրել այնպիսի թեկնածուի, ով կարող է հետագայում արժեքավոր մասնակցություն ունենալ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցման արդյունավետության բարձրացմանը, կամ ովքեր սկզբունքային, օբյեկտիվ և «շահեր չսպասարկելու» իրենց մոտեցումներ են նախկինում արտահայտել, այդ թվում՝ դատավորների շրջանում վերթինգ անելու անհրաժեշտության մասին: «Սրանով փաստորեն հնարավոր չի լինում լիարժեք կանխել այն «կորպորատիվիզմը», որի վերացման համար հենց նախատեսվել է ոչ դատավոր անդամների թվի ավելացումը հանձնաժողովում»:

Այնուամենայնիվ, հակառակ վերոգրյալ հիմնավորումների՝ Նախագծով Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրությունը առաջնային կարգով կրկին թողնվել է Դատավորների ընդհանուր ժողովին, ինչը հակասում է ոչ միայն ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին, այլև չի բխում Հանձնաժողովի գործունեության բնագավառում առկա խնդիրները հասցեագրելու հրամայականից, ներդրվող հանրային ռեսուրսները նպատակային կերպով օգտագործելու անհրաժեշտությունից, ինչպես նաև Նախագծի հիմնավորումներից:

- **Հաշվի առնելով վերո նշված չափորոշիչները՝ առաջարկվում է բազառապես դատավորների ընդհանուր ժողովի կողմից Եթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների ընտրության հնարավորությունը: Որպես**

¹⁵ CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, §§32 and 35

այլընտրանք՝ առաջարկում ենք քննարկել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում քաղաքագիական հասարակության ներկայացուցիչներին ընտրելու համար անկախ մասնագիտական հանձնաժողովի ստեղծման հարգը¹⁶:

Բ. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման ծայների նվազագույն քանակ

Ըստ Նախագծի՝ Դատական օրենսգրքի 78-րդ հոդվածը լրացվում է հետյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով.

«2.1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու կամ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդի դիմելու հարցը լուծելու համար Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի առնվազն ինը անդամ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդը: Հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունում է հանձնաժողովի՝ նիստին մասնակցող անդամների ծայների մեծամասնությամբ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը համարվում է մերժված, իսկ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում հարուցված կարգապահական վարույթը կարճվում է»:

Խիստ խնդրահարույց ենք համարում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նիստի իրավագործության համար սահմանված բարձր շեմի պահանջը, որը ենթադրում է հանձնաժողովի անդամների առնվազն 4/5-ի ներկայություն և կարող է հանգեցնել Հանձնաժողովի գործունեության խափանմանը՝ Էականորեն վտանգելով դրա արդյունավետությունը: Արձանագրենք նաև, որ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի բարեփոխման հայեցակարգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի¹⁷ կարծիքով շեշտվել է, որ բարձր քվորումները բարձրացնում են նիստերի արգելակումների ռիսկը՝ խոչընդոտելով հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը:

¹⁶ Նման հանձնաժողովի ձևավորումը, օրինակ, հավանության է արժանացել Վենետիկի հանձնաժողովի կողմից Մոլդովայի Հանրապետության դատավորների կարգապահական պատասխանատվության մասին օրենքի Նախագծի վերաբերյալ կարծիքի համատեքստում (CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §54).

¹⁷ CDL-AD(2023)045, Joint Opinion of The Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of The Council of Europe on the Concept Paper Concerning the Reform of the Ethics and Disciplinary Commission of the General Assembly of Judges, available at [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2023\)045-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2023)045-e)

Միևնույն ժամանակ ողջունելի ենք համարում Նախագծով առաջարկվող կարգավորումը, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդը, այսինքն այս որոշումն ընդունելու համար բավարար է հանձնաժողովի չորս անդամի ձայնը, ինչը առավել իմաստալից է դարձնում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը կարգապահական վարույթներին առնչվող հարցերի քննարկմանը: Դրա հետ միասին, Նախագծով սահմանվում է, որ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունում է հանձնաժողովի՝ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ նիստին հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցության պարագայում ԲԴԽ դիմելու համար անհրաժեշտ է առնվազն վեց անդամի ձայն: Վերոգրյալ կարգավորումներից բխում է, որ օրինակ՝ չորս դատավոր չհանդիսացող անդամների քվեարկության արդյունքում ընդունված՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշումը որևէ շոշափելի արդյունքի չի հանգեցնի, եթե համապատասխան միջնորդությամբ ԲԴԽ դիմելու որոշումը կայացնելիս առնվազն մեկ դատավոր անդամ չքվեարկի հօգուտ այս որոշման: Այսինքն, նույնիսկ Հանձնաժողովի վերանայված կազմի շրջանակներում՝ լրացուցիչ ոչ դատավոր անդամների և հետևաբար լրացուցիչ հանրային ռեսուրսների ներգրավումը կարող է չունենալ որևէ արդյունավետություն՝ պայմանավորված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ԲԴԽ-ին դիմելու հարցը քննարկելիս դատավոր անդամների վճռորոշ ազդեցության հանգամանքով:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ կարգապահական վարույթ հարուցելու համար անհրաժեշտ ձայների նվազագույն քանակի կարգավորումը պետք է տարածվի նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ԲԴԽ դիմելու որոշման ընդունման կարգի նկատմամբ: Հակառակ դեպքում Նախագծով սահմանված կարգավորումը կարող է պարզապես շրջանցվել՝ Հանձնաժողովում միայն դատավոր անդամների գերակշիռ մասնակցության փաստի ուժով, իսկ դատավոր չհանդիսացող անդամների մասնակցությունը Հանձնաժողովում և քվեարկությունը կարգապահական վարույթի հարցերով որևէ նշանակություն կարող է չունենալ:

Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ օրենքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիքով ընդունելի է համարել համանման կարգավորումը, երբ հաղորդումը թույլատրելի է ճանաչվում ընդունելիության պանելի երեք անդամներից ընդամենը մեկ անդամի կողմ քվեարկության արդյունքում: Ընդ որում, Նախագծի ուսումնասիրությունից բխում է, որ հաղորդման թույլատրելիության որոշումն ինքնին հանգեցնում է հաղորդման քննությանը կարգապահական խորհրդում, որն էլ իրավասու է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Այսպես, նշված կարծիքի համաձայն՝ «28-րդ հոդվածը վերաբերում է հաղորդման թույլատրելիության քննությանը: Ընդունելիության մասին որոշումը պետք է ընդունվի, եթե հանձնաժողովի առնվազն մեկ անդամ կողմ է քվեարկել հաղորդումն ընդունելի ճանաչելուն: Հաղորդման մերժումը, մյուս կողմից, պահանջում է միաձայն որոշում [...]: Սա կարծես

հավասարակշռում է համակարգը հոգուտ թույլատրելիության: Թեև սա ոչ սովորական համակարգ է, այն ընդունելի է [...]. Ողջունելի է, որ հաղորդումների մերժման վերաբերյալ որոշումները պարտադիր կերպով պետք է հիմնավորված լինեն [...]»¹⁸ :

- **Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները՝ առաջարկում ենք վերանայել Նախագծով սահմանված՝ Էթիկայի և կարգապահական հարգերի հանձնաժողովի նիստի իրավապորտության վերաբերյալ պահանջը (հանձնաժողովի առնվազն ինը անդամի պարտադիր ներկայության մասով), սահմանելով հանձնաժողովների նիստերի իրավապորտության վերաբերյալ ընդհանուր կանոնը՝ անդամների մեծամասնության ներկայության վերաբերյալ: Առաջարկվում է վերանայել նաև հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարգի վերաբերյալ որոշման ընդունման համար անհրաժեշտ ծայների նվազագույն քանակը՝ կիրառելով այս կարգի նկատմամբ Նույն կարգավորումը, որը սահմանված է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշման ընդունման համար (եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդը):**

9. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակեցման անհրաժեշտություն

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի ոլորտում ընդունված միջազգային չափանիշներից բխում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքերը պետք է ամրագրվեն օրենքով, և այդ հիմքերը պետք է ձևակերպվեն հնարավորինս հստակ:

Համաձայն Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE)՝ յուրաքանչյուր պետության օրենսդրությունը պետք է սահմանի, որքան հնարավոր է հստակ եզրերով, այն թերացումները, որոնք կարող են հանգեցնել կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև այն ընթացակարգերը, որոնք ենթակա են կիրառման¹⁹:

Նույն սկզբունքը սահմանվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից, ըստ որի՝ կարգապահական պատասխանատվության հանգեցնող իրավախախտումները և դրանց իրավական հետևանքները պետք է հստակորեն ամրագրվեն օրենքով²⁰:

Մասնագիտական վարքագծի յուրաքանչյուր խախտում չէ, որ պետք է հանգեցնի կարգապահական պատասխանատվության: Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատավորների կողմից գործերի քննության ընթացքում իրականացվող օրենքի մեկնաբանումը, փաստերի կամ ապացույցների գնահատումը չպետք է

¹⁸ CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §§73-75

¹⁹ CCJE (2002) Op. N° 3

²⁰ Checklist, the Venice Commission

հանգեցնի քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ չարամտության և կոպիտ անփութություն դրսևորման դեպքերի²¹:

Վենետիկի հանձնաժողովը Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի համար մշակված իր *amicus curiae* ամփոփագրում ընդգծել է հետևյալը. «(...) դատավորների կողմից գործերի քննության ժամանակ իրականացվող զուտ օրենքի մեկնաբանումը, փաստերի կամ ապացույցների գնահատումը չպետք է հանգեցնի քաղաքացիական, քրեական կամ կարգապահական պատասխանատվության, նույնիսկ սովորական անփութության դեպքում: Դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն՝ գործերը անկողմնակալորեն, իրենց խղճին, փաստերի մեկնաբանությանը և օրենսդրական կանոնակարգումներին համապատասխան քննելու համար: Քաղաքացիական (կամ քրեական) պատասխանատվությունը կարող է սահմանափակել դատավորի՝ օրենքը մեկնաբանելու և կիրառելու հայեցողությունը: Հետևաբար, դատավորների պատասխանատվությունը չպետք է տարածվի դատավորների իրավական մեկնաբանության վրա՝ դատավարական գործընթացներում: Միայն դիտավորյալ, միտումնավոր չաշահմամբ կամ պարբերական, լուրջ կամ կոպիտ անփութությամբ կատարված խախտումները կարող են հանգեցնել կարգապահական, քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության»²²:

Մոլդովայի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հրապարակված համատեղ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը առանձնացրել է հետևյալ կետերը. «Դատավորի կողմից տրված իրավական մեկնաբանությունը, ի տարբերություն հաստատված նախադեպային իրավունքի, ինքնին չպետք է դառնա կարգապահական պատասխանատվության հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է ոչ բարեխղճորեն, դատավարության ընթացքում կողմին օգուտ կամ վնաս հասցնելու դիտավորությամբ կամ կոպիտ անփութության հետևանքով:»²³:

Այսպիսով, սահմանված միջազգային չափանիշները վկայում են այն մասին, որ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը չի կարող բխել միայն նրա որոշումների էությունից, իրավական մեկնաբանության տարբերություններից կամ դատական սխալներից²⁴: Դատական սխալը կարող է հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության համար միայն այն դեպքում, երբ դա թույլ է տրվել ոչ բարեխղճորեն,

²¹ Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to Member States on Judges: Independence, Efficiency and Responsibilities

²² Venice Commission, CDL-AD(2017)002, Republic of Moldova – *amicus curiae* Brief for the Constitutional Court on the criminal liability of judges, paragraph 27

²³ CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §22. See also CDL-AD(2015)042, Opinion on the Laws on the Disciplinary Liability and Evaluation of Judges of "The Former Yugoslav Republic of Macedonia", §44

²⁴ Universal Charter of the Judge, art. 7–1; Principles and Guidelines on the Right to a Fair Trial and Legal Assistance in Africa, principle 4 (n) (2); Council of Europe recommendation on judicial independence, para. 66; Magna Carta of Judges, para. 21; Kyiv Recommendations, para. 25

դատավարության ընթացքում կողմին օգուտ կամ վնաս հասցնելու դիտավորությամբ կամ կոպիտ անփութության հետևանքով²⁵:

ՀՀ Ղատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Թեև նշված դրույթը վկայում է այն մասին, որ համապատասխան գործողությունները ինքնին չեն հանգեցնում կարգապահական պատասխանատվության, այն չի ներառում հստակ չափորոշիչներ առ այն, թե ինչ լրացուցիչ գործոններ կարող են հանգեցնել արարքի որակմանը որպես կարգապահական: Բարձրագույն դատական խորհուրդը որոշակի փորձեր կատարել է դրույթը հստակեցնելու նպատակով՝ իր ԲԴԽ-16-Ո-Կ-05, ԲԴԽ N ԲԴԽ-29-Ո-Կ-11, ԲԴԽ-57-Ո-Կ-17 որոշումների շրջանակներում՝ դատավորի կողմից սահմանադրական լիազորությունները գերազանցելու, պրոֆեսիոնալիզմի, դատարանին չվերապահված լիազորությունների իրականացման և որևէ իրավական հիմքից կամ ողջամիտ դատողությունից զուրկ գնահատականներ տալու դեպքերի շրջանակներում, մեր գնահատմամբ, դրանք ակնհայտորեն բավարար չեն Ղատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի որոշակիության և կարգապահական պատասխանատվության կանխատեսելիության ապահովման տեսանկյունից:

Հետևաբար, սահմանված միջազգային չափորոշիչներին համապատասխան, անհրաժեշտ է հստակորեն սահմանել, որ Ղատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված կարգապահական պատասխանատվության անձեռնմխելիությունից բազառությունները պետք է վերաբերեն միայն դիտավորության և կոպիտ անփութության դրսևորման դեպքերին: Այսինքն, Օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասում լրացում կատարելու միջոցով պետք է սահմանվի, որ օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության՝ բազառությամբ դատավորի կողմից դիտավորության և կոպիտ անփութության դրսևորման դեպքերի:

Դ. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների սահմանափակ հրապարակման կարգավորումներ

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությանն առնչվող վիճակագրությունը վկայում է այն մասին, որ Հանձնաժողովին ներկայացված հաղորդումների ճնշող մեծամասնության դեպքում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվում:

Հաշվի առնելով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը լուծելու փուլի ոչ թափանցիկ լինելու հանգամանքը, կարգապահական վարույթ

²⁵Report of the Special Rapporteur on the independence of judges and lawyers, Diego García-Sayán, 17 July 2020, available at <https://documents.un.org/doc/undoc/gen/n20/186/73/pdf/n2018673.pdf>

չհարուցելու վերաբերյալ հաղորդումը ներկայացրած անձանց ուղղված պատասխան գրությունների բովանդակային պատճառաբանությունների բացակայությունը կամ դրանց ընդհանրական բնույթը, ինչպես նաև կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ արձանագրային որոշումների անհասանելիությունը՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության նկատմամբ՝ կարգապահական վարույթներին առնչվող որոշումների կայացման հարցերով հանրային վերահսկողության իրականացումն, ըստ էության, անհնար է:

Ակնհայտ է, որ նման իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի առկայության պայմաններում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը լուծելու փուլում ի հայտ են գալիս լուրջ ռիսկեր, այդ թվում՝ դատական կորպորատիվիզմի դրսևորման ռիսկեր, որոնք հնարավոր է չեզոքացնել միայն այս գործընթացի թափանցիկության և հանրային վերահսկողության բարձրացման միջոցով:

Նախագծով Դատական օրենսգրքի 78-րդ հոդվածը լրացվում է հետյալ բովանդակությամբ 2.2-րդ կետով.

«2.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը տարեկան առնվազն մեկ անգամ իր գործունեության կարգով սահմանված կարգով մշակում և Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է պրակտիկայի ամփոփման վերաբերյալ զեկույց հաշվետու ժամանակահատվածում հարուցված և հարուցումը մերժված կարգապահական վարույթների, դրանց հարուցման և մերժման ընդհանրացված հիմքերի և հիմնավորումների, ինչպես նաև հարուցված կարգապահական վարույթներով միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու կամ վարույթները կարճելու ընդհանրացված հիմքերի և հիմնավորումների մասին՝ ապահովելով անձնական տվյալների գաղտնիությունը և անանոնությունը: Սույն մասով նախատեսված զեկույցը հանձնաժողովը հաշվի է առնում դատավորի կարգապահական պատասխանատվության հարցերի քննարկման և որոշումների կայացման ընթացքում:»:

Թեև առաջարկվող կարգավորումը դրական է գնահատվում Հանձնաժողովի գործունեության թափանցիկության բարձրացման համատեքստում, սակայն ակնհայտորեն բավարար չէ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության բնագավառում առկա խնդիրները հասցեագրելու և Հանձնաժողովի հաշվետվողականության և գործունեության կանխատեսելիության ապահովման նպատակները լիարժեք իրացնելու տեսանկյունից: Հանձնաժողովի պրակտիկայի ամփոփման վերաբերյալ զեկույցում ընդհանրացված հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների ծավալը և բովանդակային շրջանակների որոշման հարցը թողնվում է Հանձնաժողովի հայեցողությանը՝ առանց որոշակիացնելու ընդհանրական հիմնավորումներում համապատասխան փաստակազմերի հետ համադրված վերլուծության ներառման պահանջը, ինչը կասկածի տակ է դնում այս բարեփոխման և դրա իրացմանն ուղղված ռեսուրսների արդյունավետությունը՝ ընտրողական և չափազանց ընդհանրական ձևակերպումների կիրառման ռիսկերից ելնելով:

- Որպես բարձրագլած խնդրի հասցեական լուծում՝ առաջարկվում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի բոլոր որոշումների (այդ թվում՝ արձանագրային) հրապարակման պահանջի նախատեսում՝ դրանք պատճառաբանելու պարտադիր պայմանի սահմանմամբ: Միևնույն ժամանակ դատավորի հեղինակության պաշտպանությունը ապահովելու նպատակով կարող են սահմանվել հատուկ միջոցներ, օրինակ՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում՝ դատավորի և այլ անձանց անուն-ազգանունների տվյալների չներառում (այս առաջարկը հիմնված է միջապգային համեմատական փորձի վրա) (Մանրամասն տե՛ս <https://bit.ly/3iDZdDL>):

Ե. Հանձնաժողովի ոչ դատավոր անդամների վարքագծի կանոններին առնչվող կարգավորումներ

Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է Հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցման հիմքերը լրացնել հետևյալ հիմքով.

«3.1) դատավոր չհանդիսացող անդամի կողմից վարքագծի կանոնները, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները խախտելու դեպքում.».

Միևնույն ժամանակ Նախագիծը չի սահմանում Հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի վարքագծի կանոնների որևէ շրջանակ: Իսկ եթե ենթադրենք, որ վերջինիս նկատմամբ կիրառելի են դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները (այն մասով որ մասով կարող են կիրառելի լինել նաև Հանձնաժողովի ոչ դատավոր անդամի նկատմամբ), ապա նման մեկնաբանությունը ևս խնդրահարույց է Հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի մասնակցության և նրա միջոցով հանրային վերահսկողության գործառույթի իրականացման բովանդակազրկման հիմքով:

Օրենքի 69-րդ հոդվածի շրջանակներում, օրինակ, կիրառելի կարող են համարվել հետևյալ պարտականությունները.

«5) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց.

6) զերծ մնալ դատարանի գործողությունները, դատական ակտերը հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, (...).

8) զերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը.».

Ակնհայտ է, որ ոչ դատավոր անդամի կարգավիճակը և նրա վարքագծի կանոնները չեն կարող նույնացվել դատավորի վարքագծի կանոններին՝ արտահայտման ազատության, դատական իշխանությանն առնչվող քննադատողական խոսքի հնչեցման և մի շարք այլ կանոնների համատեքստում, ընդհակառակը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավումը Հանձնաժողովի կազմում առաջին հերթին հետապնդում է լայն առումով արդարադատության նկատմամբ հանրային վերահսկողության իրականացման նպատակ և

վերջինս չի կարող կաշկանդված լինել, որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, դատական իշխանությանն առնչվող ընդհանրական գնահատականների կամ քննադատության հնչեցման սահմանափակումներով: Մյուս կողմից՝ այս անորոշ կարգավորումները կարող են հանգեցնել արդյունավետ գործունեություն իրականացնող Հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների լիազորությունները կամայական և ոչ իրավաչափ եղանակով դադարեցնելու հետևանքներին:

Դրան զուգահեռ՝ հիմնավորված չէ Հանձնաժողովի դատավոր անդամների կողմից սահմանված վարքագծի կանոնների խախտումը՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցման հիմք չնախատեսելը, ի հակադրումն ոչ դատավոր անդամների: Թեև բոլոր դատավորները կաշկանդված են Դատական օրենսգրքով սահմանված վարքագծի կանոններով, սակայն դրանց խախտումը Հանձնաժողովում պաշտոնավարման համատեքստում որևէ իրավական հետևանքի չի հանգեցնում, ի տարբերություն ոչ դատավոր անդամների համար նախատեսված կարգավորումների:

- **Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 5-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը՝ առկախելով այն դատավոր չհանդիսացող անդամների համար Դատական օրենսգրքով վարքագծի առանձին կանոնների սահմանումից, որոնք միևնույն ժամանակ չեն նույնանա դատավորի ընդհանուր վարքագծի կանոնների հետ (հաշվի առնելով ոչ դատավոր անդամի՝ որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ հանդես գալու կարգավիճակը), միևնույն ժամանակ համանման իրավական հետևանքներ նախատեսելով նաև Հանձնաժողովի դատավոր անդամների համար:**

2. Նոր հանգամանքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների վերանայմանն առնչվող կարգավորումների թերություններ

ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են Բարձրագույն դատական խորհրդի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման համար, եթե վարչական դատարանն **ուժի մեջ մտնելու պահից** անվավեր է ճանաչել այն նորմատիվ իրավական ակտը, որի կիրառմամբ կայացվել է տվյալ որոշումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավաբանական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի պաշտոնական հրապարակման պահից (ex nunc), բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի: Օրենսգրքի 199-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը վարչական դատարանի կողմից կարող է անվավեր ճանաչվել **այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից, եթե նման որոշում չընդունելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել հանրության կամ պետության համար:**

Ստացվում է, որ Վարչական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելը **դատական ակտը հրապարակելու պահից** չի համարվում նոր հանգամանք՝ նշված

Նորմատիվ իրավական ակտի հիման վրա կայացված՝ համապատասխան ԲԴԽ որոշումները բողոքարկելու համար:

Նշված իրավակարգավորումները գործնականում հանգեցնում են մի իրավիճակի, երբ մի կողմից դատավորը ֆորմալ առումով ունի իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտը վիճարկելու տեսքով իրավական պաշտպանության միջոց, սակայն միևնույն ժամանակ այդ միջոցն իր իրավունքների վերականգնման տեսանկյունից կարող է դառնալ բացարձակ անարդյունավետ և ոչ պիտանի, քանի որ այդ վիճարկման դատական վարույթի դրական ելքը որևէ ազդեցություն չի ունենա և չի հանգեցնի կամ նպաստի իր խախտված իրավունքների վերականգնմանը (եթե նորմատիվ իրավական ակտը վարչական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից):

Հարկ ենք համարում նշել նաև, որ թեև ՀՀ Սահմանադրական դատարանն առիթ չի ունեցել անդրադառնալու խնդրո առարկա իրավակարգավորումների սահմանադրականության հարցին, նման փորձառությունն առկա է այլ պետությունների իրավական համակարգերում: Երբ անձի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելն իր իսկ դիմումի հիման վրա չի հանգեցնում իր համար որևէ բարենպաստ հետևանքի, բայց միևնույն ժամանակ հանգեցնում է տվյալ նորմատիվ ակտի անվավերությանն ապագայի համար, **առհասարակ արժեզրկվում է վարչական դատարան դիմելու իրավունքը, անձը զրկվում է նման դիմում ներկայացնելու շահագրգռվածությունից, խաթարվում է վստահությունը դատական համակարգի և արդարադատության նկատմամբ, ինչպես նաև անձը հայտնվում է անհավասար դրության մեջ՝ այն անձանց հետ համեմատությամբ, ովքեր ապագայում կզգան այս որոշման դրական ազդեցությունը՝ սեփական ջանքեր չգործադրելով ոչ օրինական նորմատիվ իրավական դաշտը վերացնելու համար**²⁶:

- **Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ, առաջարկում ենք փոփոխել խնդրո առարկային վերաբերող ՀՀ դատական օրենսգրքում առկա կարգավորումները՝ նախատեսելով, որ անձը, ում դիմումի հիման վրա Վարչական դատարանը անվավեր է ճանաչել նորմատիվ իրավական ակտը՝ անկախ նրանից թե որ պահից է այն անվավեր ճանաչվել՝ ակտի ընդունման, թե դատական ակտը հրապարակելու, իրավունք է ձեռք բերում նոր հանգամանքի հիմքով բողոքարկել այն ԲԴԽ ակտը, որի հիմքում դրվել է անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտը:**

Իրավունքի վարգացման և պաշտպանության հիմնադրամ

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Ժողովրդավարության վարգացման հիմնադրամ

«Հելսինկյան բաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

²⁶ ԲԴ ՍԴ որոշում 2018 թ. N 29-Պ